

Էրազմուս +. ասպիրանտները ներկայացնում են հաշվետվություններ

Ս.թ. հունիսի 18-ին ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի մեծ դահլիճում տեղի է ունեցել գիտխորհրդի ընդլայնված նիստ: Նիստի ընթացքում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի ասպիրանտները ներկայացրել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի և Իտալիայի Տուշայի համալսարանի միջև իրականացված Erasmus+ KA107 շարժունության ծրագրի շրջանակներում Իտալիայի Տուշայի համալսարան կատարած այցի, եռամսյա հետազոտական աշխատանքների արդյունքների և ձեռք բերված պայմանավորվածությունների վերաբերյալ ելույթներ: Erasmus+ KA107 ծրագիրն այս տարի աննախադեպ էր այն առումով, որ ասպիրանտները իրենց նմուշները տեղափոխել էին Տուշայի համալսարանի գիտահետազոտական լաբորատորիաներ, և չնայած ծրագրով նախատեսված չէին ֆինանսական միջոցներ՝ իտալացի գործընկերների շնորհիվ փորձարկումներն իրականացվել է համալսարանի բյուջետային միջոցների հաշվին:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի ասպիրանտ և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագետ Լիանա Սիրեյանը ասպիրանտների փոխանակման ծրագրով ս.թ. փետրվարի 21-ից մինչև մայիսի 15-ը գտնվել է Տուշայի համալսարանում (Իտալիա): Այցի ընթացքում Լ. Սիրեյանը իրականացրել է ասպիրանտական աշխատանքի հետազոտական մասի իրականացում «Բջջային ու մոլեկուլային սնուցման» լաբորատորիայում (Laboratory of Cellular and Molecular Nutrition): Լաբորատորիայի ղեկավար պրոֆեսոր Ն. Մերենդինոյի հետ քննարկվել են ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրության տեխնոլոգիաների մշակման, զարգացման, մթերքի հակաօքսիդանտային ակտիվության որոշման ժամանակակից եղանակներն ու զարգացման միտումները: Վերոնշյալ լաբորատորիայում ժամանակակից մեթոդներով ուսումնասիրվել են հայկական ծագում ունեցող տարբեր տեսակի հատիկային կուլտուրաների, ինչպես նաև հայկական մեղրի հակաօքսիդանտային ակտիվությունը և ֆենոլների ընդհանուր պարունակությունը:

Եռամսյա հետազոտական ծրագրի շրջանակներում Իտալիայում Լ.Սիրեյանը հանդիպել է իմոբիլիտատի լավագույն մասնագետներից մեկի՝ Կարլո Նեպերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ֆունկցիոնալ թթխմորի ստացման մեթոդները, Ֆունկցիոնալ սննդամթերքի, մասնավորապես հացի արտադրության ժամանակակից տեխնոլոգիաները:

Հայաստանից տարված հատիկային կուլտուրայի հետազոտության արդյունքների, քննարկումների և ձեռք բերված գիտելիքի ու փորձի արդյունքում նույն հատիկային կուլտուրաներից ստացված այլուրից պատրաստվել է ֆունկցիոնալ հաց և «Բջջային ու մոլեկուլային սնուցման» լաբորատորիայում որոշվել է հակաօքսիդանտային ակտիվությունը և ֆենոլների ընդհանուր պարունակությունը: Տուշայի համալսարանի «Բջջային ու մոլեկուլային սնուցման» լաբորատորիայի աշխատակիցների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ուղղված ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրության ոլորտում գիտական համատեղ նախագծերի մշակմանը, իրականացմանը և համատեղ հոդվածների հրատարակմանը:

Լ. Սիրեյանը Տուշայի համալսարանում մասնակցել է պրոֆեսոր Ն. Մերենդինոյի դասավանդած «Մննդագիտություն», «Դիետետիկա և ֆունկցիոնալ սնունդ», պրոֆեսոր Ֆ. Ալբիսինիի դասավանդած «Գլոբալ ագրոպարենային իրավունք», ինպես նաև իտալերենի դասընթացներին:

Նիստի ընթացքում Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնի ասպիրանտ Գայանե Մելքոնյանի կողմից ներկայացվել է Տուշայի համալսարանի Կենսաբանական, ագրոպարենային և անտառային համակարգերի նորարարության դեպարտամենտի (DIBAF) Գյուղատնտեսական քիմիկատների հետազոտման լաբորատորիայում ICP OES սպեկտրաչափով (ՕՊՏԻՄՍ 8000DV, Perkin Elmer) աշխատելու և տվյալ սարքով տարբեր միջավայրերում քիմիական տարրերի պարունակությունների որոշմանն ուղղված աշխատանքների ամփոփ նկարագիրը: Ծրագրի ընթացքում արտալաբորատոր վերահսկողության համար վերոնշյալ սարքով տարրալուծվել են Հայաստանից տարված հողային տասը նմուշներ՝ սնդիկի պարունակությունների որոշման նպատակով: Եռամսյա հետազոտական աշխատանքի ընթացքում իրականացվել է նաև հողի որակական հատկանիշների գնահատմանն ուղղված ֆիզիկաքիմիական բնութագրերի որոշման մեթոդների ծանոթացում՝ ներառյալ CaCo_3 որոշում կալցիոմետրիայի ASTIS մեթոդով, հողի մանրէաբանական

կազմի որոշում FAME մեթոդով, հողի կազմվածքի որոշում և OxiTop սարքի կիրառմամբ հողերի կլանման (ռեսպիրացիոն) ակտիվության որոշում:

Քննարկվեցին նաև իտալացի գործընկերների հետ ձեռք բերված համաձայնությունները, նախանշված համագործակցությունները և համատեղ հրատարակումների վերաբերյալ պայմանավորվածությունները:

Հանդիպման ավարտին ամբիոնի վարիչ պրոֆ. Սադաթեյանը շնորհակալություն հայտնեց ծրագրի պատասխանատուներին, Իտալիայի գործընկերներին, ինչպես նաև ասպիրանտներին՝ գերազանց աշխատանքի համար: